Նախագիծ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՍՊՈՐՏ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ, «***ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ՝ ԿԻՆԵԶԻՈԼՈԳԻԱ*** » ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԱՇԱՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ «ՍՊՈՐՏ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ» (ԿԻՆԵԶԻՈԼՈԳԻԱ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ՝ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

1. **Հյուսվածքների կառուցվածքային առանձնահատկություններն և տարա-տեսակները:**
2. **Հասկացություն գեղձերի մասին՝**
    - Ներզատական գեղձեր,
    - Արտազատական գեղձեր,
    - Խառը գեղձեր:
3. **Նյարդային համակարգի կառուցվածքը:**
4. **Վեգետատիվ նյարդային համակարգ՝**
    - Սիմպաթիկ և պարասիմպաթիկ ենթաբաժիններ:
5. **Ռեֆլեքս, ռեֆլեքսայինաղեղ:**
6. **Ողնուղեղի կառուցվածքը:**
7. **Գլխուղեղի կառուցվածքը:**
8. **Զգայարաններ:**
9. **Տեսողական վերլուծիչ:**
10. **Լսողական վերլուծիչ:**
11. **Մաշկի կառուցվածքը:**
12. **Հոտառության և համի զգայարան:**
13. **Հենաշարժողական համակարգի գործառույթը:**
14. **Կմախքի բաժինները՝**
    - Իրանի կմախք,
    - Վերին վերջույթի կմախք,
    - Ստորին վերջույթի կմախք:
15. **Մկանային համակարգ՝**

- Հարթ մկաններ,
- Կմախքային մկաններ:

16. **Արյուն և նրա բաղադրությունը:**
17. **Արյան ձևավոր տարրերը:**
18. **Արյան խմբեր, արյան փոխներարկում:**
19. **Արյան շրջանառության համակարգ:**
20. **Սրտի կառուցվածքը:**
21. **Ավշային համակարգի շրջանառություն:**
22. **Արտազատման օրգաններ:**
23. **Միզագոյացման առանձնահատկությունները:**
24. **Շնչառական օրգանների կառուցվածքը և գործառույթը:**
25. **Շնչառական շարժումները և գազափոխանակությունը թոքերում:**
26. **Մարսողական համակարգի կառուցվածքը և գործառույթները:**
27. **Մարսողությունը բերանի խոռոչում:**
28. **Մարսողությունը ստամոքսում:**
29. **Մարսողությունը աղիներում:**
30. **Վերարտադրողական համակարգի օրգաններ:**

ՌԵԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Դ.Ս. ԽԻԹԱՐՅԱՆ

Սույն հարցաշարում ընդգրկված է 2020-2021թթ. ուս տարվա «Սպորտ» մասնագիտության«Առողջարարական ֆիզիկական կուլտուրա» (Կինեզիոլոգիա) բակալավրի կրթական ծրագրի առկա բաժնի ընդունելության հարցերը:

Հարցաշարի հիման վրա կազմվել են թեստային առաջադրանքներ: Որպես հիմք են ընդունվել «Կենսաբանություն: Մարդ» առարկայի ուսումնական ծրագրերը:

Հարցերը և թեստային առաջադրանքները կազմված են բացառապես հանրակրթական դպրոցի «Կենսաբանություն: Մարդ» առարկայի ուսումնական ծրագրերի շրջանակներում:

Յուրաքանչյուր թեստային աշխատանք իր մեջ ներառում է 20 առաջադրանք /հարցեր/:

Յուրաքանչյուր հարցի դեպքում ներկայացված է պատասխանի 4 տարբերակ, որոնցում պարտադիր կերպով առկա է միայն մեկ ճիշտ պատասխան:

Գրականության աղբյուրներնեն՝

1. Կենսաբանություն: Մարդ: 8-րդդասարանիդասագիրք./Ս.Հ. Սիսակյան, Տ. Վ. Թանգամյան, Գ. Ի. Միրզոյան - Եր.: ՏիգրանՄեծ, 2014. - 208 էջ:
2. Կենսաբանություն: Մարդ: Դասագիրք հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի համար /Ս.Վ. Ամիրյան, Է.Ս. Գևորգյան, Ֆ.Դ. Դանիելյան, Ա.Հ.Եսայան, Ն.Ա. Հովհաննիսյան. – Եր.: «Աստղիկ Գրատուն», 2014թ.- 208էջ:

Օրինակելի ձևաչափ

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հարգելի դիմորդ խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացեք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել ապա ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Յուրաքանչյուր հարցի դեպքում ներկայացված է պատասխանի 4 տարբերակ, որոնցում պարտադիր կերպով առկա է միայն մեկ ճիշտ պատասխան:Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար դիմորդը ստանում է 1 միավոր:

Մաղթում ենք հաջողություն:

1. Ո՞ր հյուսվածքն է կազմում կմախքային մկանների հիմքը

ա) էպիթելայինը

բ) հարթ մկանայինը

գ) շարակցականը

դ) միջաձիգ զոլավոր մկանայինը

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

2. Ո՞ր գեղձի գործունեության խախտումով է պայմանավորված արյան մեջ գլյուկոզի քանակության աճը

ա) ենթաստամոքսային

բ) վահանաձև

գ) ուրցագեղձ

դ) մակերիկամի կեղևային շերտի

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

3. Նվազագույնը քանի՞ նեյրոնից կարող է բաղկացած լինել ռեֆլեքսային աղեղ մարդու օրգանիզմում

ա) մեկ

բ) երկու

գ) երեք

դ) չորս

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

4.Միջանկյալուղեղիբաժիններից է

ա) երկարավուն ուղեղը

բ) տեսաթմբերը

գ) կենաց ծառը

դ) քունքային բիլթը

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

5. Նշել մարդու օրգանիզմի ողնուղեղի վերաբերյալ բոլոր ճիշտ պնդումները

ա) ողնուղեղը գտնվում է ողնաշարի խողովակում պարանոցային առաջին ողից մինչև գոտկային երկրորդ ողը, ողնուղեղից դուրս են գալիս 31 զույգ ողնուղեղային խառը նյարդեր

բ) ողնուղեղից սկիզբ են առնում 12 զույգ նյարդեր, երկարությունը 60սմ, կազմության մեջ մտնում է երկարավուն ուղեղը:

գ) ողնուղեղը գտնվում է ողնաշարի խողովակում կրծքային առաջին ողից մինչև պոչուկային վերջին ողը, քաշը կազմում է մոտավորապես 800-1000գ:

դ) ողնուղեղը կազմում է ծայրամասային նյարդային համակարգի բաղկացուցիչ մասը, նրա պարանոցային և սրբանային բաժիններում կան կողմնային եղջյուրներ:

ա)☐

բ)☐

գ)☐

դ) ☐

6. Ո՞րն է կազմում մարդու արտաքին ականջի մաս

ա) ականջախեցին

բ) մուրճիկ

գ) լսողական փողը

դ) սալը

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

7. Ո՞րը մարդու հենաշարժիչ համակարգի գործառույթ չէ

ա) պաշտպանական

բ) հենարանային

գ) արյունաստեղծ

դ) կարգավորող

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

8. Վերին վերջույթի կմախքի կազմության մեջ մտնում է

ա) սրբոսկրը

բ) նախաբազկի ոսկրերը

գ) կրծոսկրը

դ) սրունքի ոսկրերը

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

9. Մարդու ողնաշարի ո՞ր բաժիններն են սերտաճած

ա) սրբանային

բ) գոտկային

գ) կրծքային

դ) պարանոցային

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

10. Ինչպե՞ս են մարդու մկաններն ամրանում կմախքին

ա) ջլերով

բ) սինապսներով

գ) նյարդաթելերով

դ) արյունատար անոթների միջոցով

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

11.Նշել մարդու մկանների վերաբերյալ բոլոր ճիշտ պնդումները

ա) սրտի մկանը ըստ կառուցվածքի հարթ է և հանդիսանում է կամային կծկվող մկան

բ) կմախքային մկանները կազմված են միջաձիգ զոլավոր մկանաթելերից, որոնք միանալով կազմում են խրձեր

գ) հարթ մկանները հանդիսանում են կամային մկաններ և կծկվում են մեր կամքով

դ) կմախքային մկանները կծկվում են դանդաղ և ուշեն հոգնում

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

12. Ո՞ր զարկերակներով է հոսում երակային արյունը

ա) ազդրային երակ

բ) թոքային զարկերակ

գ) վերին սիներակ

դ) բազկային զարկերակ

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

13. Նշել մարդու արյան վերաբերյալ ճիշտ պնդումը

ա) արյան թիթեղիկները կամ թրոմբոցիտները մասնակցում են արյան մակարդման գործընթացին

բ) լեյկոցիտները հեռացնում են հյուսվածքների թթվածինը և 1մմ^3 արյան մեջ պարունակում են 4,5-5 մլն լեյկոցիտ

գ) էրիթրոցիտները հանդիսանում են արյան սպիտակ գնդիկները

դ) լեյկոցիտները հանդիսանում են արյան կարմիր գնդիկները

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

14. Ե՞րբ է մարդու օրգանիզմում ձևավորվում բնական իմունիտետը

ա) երբ մարդ վարակվում է այս կամ այն հիվանդությամբ

բ) երբ մարդուն ներարկում են բուժի չշիճուկ

գ) երբ օրգանիզմ են ներմուծվում հիվանդության հարուցիչների նկատմամբ ձևավորված հակամարմիններ

դ) երբ օրգանիզմ են ներմուծվում հիվանդության թուլացրած հարուցիչները

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

15. Ու՞ր է անցնում օդն անմինջապես քթի խոռոչից մարդու ներշնչման ժամանակ

ա) շնչափոխ

բ) կերակրափող

գ) քթըմպան

դ) բրոնխներ

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

16. Ի՞նչ է թոքամզային խոռոչը

ա) կրծքավանդակի ներքին խոռոչն է, որում գտնվում են թոքերը, սիրտը և այլ օրգաններ

բ) թոքային և մերձպատային (առպատային) թոքամզային թաղանթների միջև ձևավորվող ազատ տարածությունն է, որը լցված է քիչ քանակությամբ հեղուկով

գ) թոքային և մերձպատային (առպատային) թոքամզային թաղանթների միջև ձևավորվող նեղդատարկ անօդ տարածությունն է

դ) թոքերի մակերևույթի և մերձպատային թոքամզային թաղանթի միջև ձևավորվող ազատ տարածությունն է, որը պատված է էպիթելով և լցված է օդով

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

17. Ի՞նչ նյութով է ծածկված ատամի պսակն արտաքինից

ա) կակղանով

բ) ցեմենտով

գ) էմալով

դ) դենտինով

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

18. Մարսողական համակարգի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ

ա) սննդագնդի կլման ակտի ժամանակ մակկոկորդի շնորհիվ բացվում է կոկորդի մուտքը, որտեղով էլ սննդագնդիկը անմիջապես անցնում է ստամոքս

բ) բարակ աղու սկզբնամասը կազմում է կույրաղին, իսկ հաստաղու կազմության մեջ մտնում է 12-մատնյա աղին

գ) ստամոքսը համարվում է մարսողական խողովակի ամենանեղ հատվածը և տեղակայված է ստոծանու վրա

դ) լյարդը հանդիսանում է մարդու օրգանիզմի ամենամեծ գեղձը, իսկ բարակաղիները հանդիսանում են մարսողական խողովակի ամենաերկար հատվածը

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

19. Քանի՞ լիտր առաջնային /նախնական/ մեզ է առաջանում մեկ օրում առողջ մարդու օրգանիզմում

ա) 200-250
բ) 1,5-2
գ) 2,5-2,7
դ) 150-170

ա)☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐

20. Ո՞րը վերարտադրողական համակարգի օրգան չէ

ա) ձվարան
բ) սերմնարան
գ) նեֆրոնը
դ) շագանակագեղձ

ա) ☐

բ) ☐

գ) ☐

դ) ☐